

Նախարար Սուրեն Պապիկյանը խորհրդակցություն է անցկացրել ՀՀ մարզպետների մասնակցությամբ

27.02.2019



ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը փետրվարի 26-ին հերթական աշխատանքային խորհրդակցությունն է անցկացրել ՀՀ մարզպետների մասնակցությամբ, որին ներկա է գտնվել նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը:

Ողջունելով գործընկերներին և անցնելով օրակարգի հանրակրթության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը՝ նախարար Սուրեն Պապիկյանը նշել է, որ խորհրդակցությանը ՀՀ ԿԳ նախարարի անմիջական մասնակցությունը հիանալի հնարավորություն է ուղիղ շփումների միջոցով վեր հանել և քննարկել վաղուց կուտակված միջգերատեսչական հետաքրքրություններ կայացնող խնդիրները:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը ՀՀ մարզպետների հետ քննարկել է մարզերում կրթության որակի բարձրացմանը, դպրոցների արդյունավետ և օպտիմալ կառավարմանն առնչվող հարցեր, առաջարկություններ ներկայացրել ոլորտի առջև ծառայած հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Հաջորդիվ նախարար Պապիկյանը մարզպետներին հորդորել է ուշադրության կենտրոնում պահել մարզերում առաջնային լուծում պահանջող խնդիրներին ուղղված ծրագրերի իրականացման ընթացքը: Նախարարը նաև պահանջել է հետևողական գտնվել գույքագրված խնդիրների, նախանշված միջոցառումների ամենօրյա մշտադիտարկման ու դրանց արդյունքների հրապարակայնացման հարցում:

Գյուղատնտեսական շրջանին ընդառաջ Սուրեն Պապիկյանը մարզպետներին հանձնարարել է համայնքներում սկսել հակակարկտային կայանքների ապակոնսերվացման աշխատանքները և դրանք բերել շահագործման համար պատրաստ վիճակի՝ բացառելու համար տեխնիկական և կառավարելի ռիսկերը: Ի թիվս օրակարգային մի շարք հարցերի, խորհրդակցությանն անդրադարձ է կատարվել նաև համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների հայտերի ներկայացմանը, համայնքներում աղբահանության ծախսերի և եկամուտների ցուցանիշերին, ինչպես նաև ֆիզիկական անձանց հողի հարկի և գույքահարկի ծանուցագրերի ու անդորրագրերի տպագրման, հաշվառման և հատկացման գործընթացին:

Աղբյուրը՝ <http://mtad.am>, 26.02.2019